

Ապահովագրության  
կանոններ  
Insurance rules

2010

Հաստատված է “ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ” ԱՓԲԸ Խորհրդի կողմից  
(արձանագրություն թիվ 10, առ 25.11.2008թ.): Գործում է 2009թ.-ի  
հունվարի 1-ից:

Confirmed by the Council of “INGO ARMENIA” ICJSC (protocol #10 of  
25.11.2008). Effective since January 1, 2010.

Բեռնափոխադրումների  
ապահովագրության  
կանոններ  
Cargo insurance rules

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	HEADING
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....3	1. GENERAL PROVISIONS.....3
2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....3	2. DEFINITIONS.....3
3. ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ .....3	3. LEGISLATION.....3
4. ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ (Ա) ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՈՒՄԿԵՐ).....3	4. INSTITUTE CARGO CLAUSES (A) INSURANCE EVENTS (RISKS).....3
5. ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....4	5. EXCLUSIONS.....4
6. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.....5	6. DURATION/PERIOD OF COVER.....5
7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....6	7. THE PROCEDURE OF A CLAIM PAYMENT.....6
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....7	8. ADDITIONAL DOCUMENTS AND INFORMATION REQUIRED FOR CLAIM PAYMENT.....7
9. ՎՆԱՍԻ ՉՍՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....8	9. THE PROCEDURE OF LOSS ASSESSMENT AND CLAIMS PAYMENT.....8
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՍՔԵՐԸ.....11	10. BASES FOR A CLAIM PAYMENT REFUSAL.....11
11. ԱԲԱՆԴՈՆ (ԱՊԱՀՈՎԱԳՐԻ ԿԱՄ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԲԵՌԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ).....11	11. ABANDON (REFUSAL OF THE RIGHTS UPON THE INSURED CARGO BY INSURED OR BENEFICIARY).....11
12. ՀԵՏՊԱՀԱՆՁ.....12	12. SUBROGATION.....12
13. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՂԱԺԱՍԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....12	13. AMENDMENT AND CANCELLATION OF INSURANCE POLICY.....12
14. ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍՆԱՏԵԼԻՈՒԹՅՈՒՆ.....12	14. PROVISION SEVERABILITY.....12
15. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ.....13	15. LANGUAGE OF THE POLICY.....13
16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....13	16. RESOLUTION OF DISPUTES.....13

<p align="center"><b>1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ</b></p>	<p align="center"><b>1. GENERAL PROVISIONS</b></p>
<p>1.1 Ապահովագրության վկայագիրը/պայմանագիրը/վկայում է Ձեր և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ-ի միջև պայմանագրի առկայության մասին:</p>	<p>1.1 Insurance Certificate/policy/ is evidence of the policy between You and “INGO ARMENIA” ICJSC.</p>
<p>1.2 Ապահովագրավորների ստացման և ընդունման դիմաց՝ Ապահովագրության պայմանագրի պայմանների համաձայն, մենք կտրամադրենք ապահովագրություն ճրագրում ներկայացված այն կետերի համար, որոնք կիրառվում են համապատասխանաբար վթարի, վնասի, կորստի, կամ պարտավորության դեպքերում, որոնք պատահել են տարածքային սահմանափակումների շրջանակներում պայմանագրի գործողության ժամկետում:</p>	<p>1.2 In return for receiving and accepting the Insurance Premium we will provide insurance in accordance with the terms of this Policy for those Sections presented in the Schedule that apply to accident, damage, loss, or liability, occurring in the territorial limits during the Period of Cover.</p>
<p align="center"><b>2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ</b></p>	<p align="center"><b>2. DEFINITIONS</b></p>
<p>2.1 «Ապահովագրության պայմանագիր» նշանակում է սույն ապահովագրության պայմանները և դրույթները և վկայագիրը: Ցանկացած փոփոխություն կամ հավելում կնշվի Ապահովագրության պայմանագրի Հավելվածում:</p>	<p>2.1 “Insurance Policy” means this insurance terms and rules and certificate. Any changes or alterations will be reflected in an Endorsement to the Policy.</p>
<p>2.2 «Մենք», «մեր», և «Ընկերություն» բառերը նշանակում են «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ: «Ապահովագրության օբյեկտ կամ առարկա» պայմանագրում նշված ապահովագրված բեռ: «Փոխադրամիջոց» նավագնացության / շահագործման և բեռների տեղափոխման համար պիտանի տրանսպորտային միջոց: «Աբանդոն» նշանակում է Ապահովագրի ապահովագրված օբյեկտի նկատմամբ իր իրավունքից հրաժարումը ի օգուտ Ապահովագրողի՝ նպատակ ունենալով ստանալ որպես ապահովագրական հատուցում ամբողջ ապահովագրական գումարը: Աբանդոնը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ չի կարելի լիարժեք վստահությամբ կորած համարել ապահովագրության օբյեկտը, սակայն բարձր է հավանականությունը դրա կորած լինելու, ներառյալ տրանսպորտային միջոցի ամբողջական կորուստը, վնասված բեռի վերականգնման ծախսերի տնտեսապես աննպատակահարմար լինելը:</p>	<p>2.2 “We”, “us”, and “Company” mean “INGO ARMENIA” ICJSC. “Interest or Insured object” - cargo mentioned in the Policy. “Carrier – vessel” (craft) suitable for conveyance and cargo shipping. “Abandon” means the refusal of the Insured from his/her rights upon the insured object in favor of the Insurer intending to get the whole Sum insured as a benefit. Abandoning is permitted only when insured object cannot be fully and certainty considered as lost, but there is a high probability of it, including Total Constructive Loss of the vessel, and economically meaningless costs of damaged cargo restoration.</p>
<p align="center"><b>3. ԿԻՐԱՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ</b></p>	<p align="center"><b>3. LEGISLATION</b></p>
<p>3.1 Սույն ապահովագրությունը ենթարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:</p>	<p>3.1 This Insurance is subject to the Legislation of the Republic of Armenia.</p>
<p align="center"><b>4. ԲԵՌՆԱՓՈՆԱԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ (Ա) ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՍԿՆԵՐ)</b></p>	<p align="center"><b>4. INSTITUTE CARGO CLAUSES (A) INSURANCE EVENTS (RISKS)</b></p>
<p>4.1 Սույն ապահովագրությունը ծածկում է ապահովագրության օբյեկտի կորստի կամ դրան պատճառած վնասի հետ կապված բոլոր ռիսկերը՝ բացառությամբ սույն ապահովագրության Բացառությունների 5.1; 5.2; 5.3; և 5.4 հոդվածներում սահմանված դեպքերի:</p>	<p>4.1 This Insurance covers all risks of loss of or damage done to the insurance object (interest) except for the cases provided in Clauses 5.1; 5.2; 5.3; and 5.4 in the Exclusions section below.</p>
<p>4.2 Սույն ապահովագրությունը ծածկում է ընդհանուր վթարային և գույքի փրկման հետ կապված ճշգրտված կամ բեռնափոխադրման պայմանագրում և/կամ գործող օրենքում սահմանված և գործնականում ձևավորված այն բոլոր ծախսերը, որոնք առաջացել են ցանկացած պատճառով կորստից խուսափելու կամ դրա առնչությամբ ձեռնարկված քայլերի կապակցությամբ՝ բացառությամբ 5.1; 5.2; 5.3 հոդվածներով կամ սույն ապահովագրության այլ դրույթներով որպես բացառություն սահմանված դեպքերի:</p>	<p>4.2 This Insurance covers general average and salvage charges, adjusted or determined according to the cargo insurance policy and/or the governing law and practice, incurred to avoid or in connection with the avoidance of loss from any cause except for those excluded in Clauses 5.1; 5.2; 5.3; and or elsewhere in this Insurance.</p>

<p>4.3 Սույն ապահովագրությունը կիրառվում է բեռնափոխադրման պայմանագրում նախատեսված «նավերի բախման հետևանքով պատճառված վնասը կրելու կողմերի հավասար պատասխանատվության մասին» դրույթի նկատմամբ: Նշված դրույթի ուժով նավի սեփականատիրոջ կողմից որևէ հայտի ներկայացման /հայտի հարուցման/ դեպքում ապահովադիրը պետք է այդ մասին ծանուցի Ապահովագրողին, որն իրավունք ունի պաշտպանել ապահովադիրին ներկայացված հայտի առնչությամբ՝ կրելով պաշտպանության հետ կապված բոլոր ծախսերը:</p>	<p>4.3 This Insurance is extended to indemnify the Insured against such proportion of liability under the cargo insurance policy “Both to Blame Collision” Clause as is with respect to a loss recoverable hereunder. In the event of any claim by ship owners under the said Clause the Insured agrees to notify the Insurer who shall have the right, at their own cost and expense, to defend the Insured against such claim.</p>
<p><b>5. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b></p>	<p><b>5. EXCLUSIONS</b></p>
<p>5. Սույն ապահովագրությունը ոչ մի դեպքում չի հատուցում այն վնասը, կորուստը կամ ծախսը, որն առաջացել, պատճառվել կամ հետևանք է՝</p>	<p>5. In no case shall this Insurance cover the damage, loss or expense that occurred, was done or is a cause of</p>
<p>5.1.1 Ապահովադիրի պարտականությունների կանխամտածված թերացմանը.</p>	<p>5.1.1 willful misconduct of the Insured’s obligations</p>
<p>5.1.2 ապահովագրության օբյեկտի սովորական հոսքեր, քաշի կամ ծավալի սովորական կորստի, մաշվածությանը</p>	<p>5.1.2 ordinary leakages, ordinary loss in weight or volume, or ordinary wear and tear of the insured object (interest)</p>
<p>5.1.3 ապահովագրության օբյեկտի գողության կամ անբացատրելի պակասորդի/կորստի, բացառությամբ այն դեպքերի, երբ ապացուցվում է, որ այդպիսի գողությունը կամ պակասորդը/կորուստը տեղի է ունեցել ապահովագրության վկայագրի գործողության ընթացքում կոնտեյներն և/կամ փոխադրամիջոց բռնի և/կամ հարկադրական մուտք գործելու արդյունքում (այդ թվում կողոպուտը, հափշտակում), ինչը իր հերթին նշանակում է. այլ անձի կամ անձանց անսպասելի բռնի ներթափանցումը կոնտեյների կամ փոխադրամիջոցի մեջ, պոկելով կամ վնասելով կապառակնիքները, թողնելով տեսանելի հետքեր, որոնք կատարվել են գործիքներով, պայթուցիկ նյութերով, էլեկտրականությամբ կամ քիմիական նյութերով, կամ կոնտեյների/տուփի/փաթեթավորման արտաքին մակերեսի/ծածկույթի տեսանելի ֆիզիկական վնասով, այդ թվում ջարդելով և քայքայմամբ:</p>	<p>5.1.3 theft of the insurance object (interest) or any unexplained shortage unless such theft or shortage can be demonstrated to have taken place by violent and/or forcible entry into the container and/or carrying conveyance (hijacking, robbery) during the period of this insurance. Those in their turn mean unforeseen and forcible entry of other persons into container or vessel, by tearing off or damaging seals, leaving visible tracks, which were done by means of any tools, electricity, explosive or chemical agents; or visible external physical damages of surface/cover of containers/boxes/packaging, including breakage or deterioration.</p>
<p>5.1.4 ապահովագրության օբյեկտի ոչ բավարար և նման գույքի համար նախատեսված ոչ ճիշտ փաթեթավորման, այդ թվում արտադրողի կողմից ընդունված կամ պետական ստանդարտների համաձայն կամ տեղադրման կամ նախապատրաստման թերությունների (սույն 5.1.4 հոդվածի իմաստով «տեղադրում» նշանակում է ապահովագրության օբյեկտի տեղադրումը կոնտեյներում կամ ամբարձիչ բեռնախցում՝ մինչ սույն ապահովագրության ուժի մեջ մտնելը, այդպիսի տեղադրումն կարող է իրականացվել ապահովադիր կամ նրա աշխատակիցների կողմից).</p>	<p>5.1.4 insufficient or inappropriate packaging of the insurance object (interest) or of a similar property, including the lack of manufacture’s packaging or of Government standards or of placement or preparation of the insurance object (for the purpose of the Clause 5.1.4 “packaging” shall be deemed to include cargo into container or lift van, such cargo can be carried out prior to the enforcement of this Insurance or by the Insured or his/her workers)</p>
<p>5.1.5 ապահովագրության օբյեկտին հատուկ կամ դրա բնույթին բնորոշ թերությանը.</p>	<p>5.1.5 lack that is specific to or is natural for the type of the insured object (interest)</p>
<p>5.1.6 բեռի ուշացմանը, անգամ այն դեպքում, երբ այդպիսի ուշացումն առաջացել է ապահովագրված ռիսկի պատճառով (բացառությամբ Ապահովագրական Ռիսկերի Հոդված 4.2-ով նախատեսված վճարման ենթակա պատահարի).</p>	<p>5.1.6 delay in arriving of the insured object (interest), even when the delay is caused by an insurance risk (except for the payable cases under Risks Covered Clause 4.2 above)</p>
<p>5.1.7 տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ, ղեկավարի, վարձակալի, վարորդի, օպերատորի կամ շահագործողների անվճարունակությանը կամ ֆինանսական պարտավորությունների խախտում</p>	<p>5.1.7 insolvency or financial liabilities defaults of the owners, managers, charterers, operators or users of the carrier</p>
<p>5.1.8 ատոմային կամ միջուկային միաձուլվածք և/կամ համաձուլվածք պարունակող որևէ պատերազմական զենքի կիրառմանը կամ այլ ռեակտիվ կամ ռադիոակտիվ ուժի կամ գործոնի ներգործմանը:</p>	<p>5.1.8 use of any weapon of war employing atomic or nuclear fission and/or fusion or other like reaction or radioactive force or matter.</p>
<p>5.2 Սույն ապահովագրությունը ոչ մի դեպքում չի հատուցում</p>	<p>5.2 In no case shall this Insurance cover damage, loss</p>

այն վնասը, կորուստը կամ ծախսը, որն առաջացել, պատճառվել կամ հետևանք է՝	or expense that was created or caused by or is a result of:
5.2.1 Ծովային կամ այլ տրանսպորտային միջոցի ապահովագրության օբյեկտի անվտանգ փոխադրման համար նախատեսված կոնտեյների կամ ամբարձիչ բեռնախցերի անհարմարության, այն դեպքում, երբ ապահովագրության առարկայի այդտեղ տեղադրման ժամանակ Ապահովադիրը կամ նրա աշխատակիցները տեղյակ են եղել դրա անպիտանի լինելու մասին.	5.2.1 non-suitability of a vessel or of a craft conveyance container or lift van for the safe carriage of the interest (insured object), when the Insured or his/her workers are privy to such worthlessness at the time the interest (insured object) is loaded therein.
5.3 Սույն ապահովագրությունը ոչ մի դեպքում չի հատուցում այն վնասը, կորուստը կամ ծախսը, որն առաջացել է՝	5.3 In no case shall this Insurance cover damage, loss or expense that was caused by
5.3.1 քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, խռովության կամ դրա արդյունքում քաղաքացիական գործադուլի, կամ ապստամբ ուժի կողմից կամ դրա դեմ գործադրված բռնի գործողության հետևանքով.	5.3.1 a civil war, rebellion, revolution, insurrection, or civil strife arising as a result, or any hostile act by or against a belligerent power
5.3.2 բռնագրավման, գրավման, ձերբակալման, սահմանափակման կամ արգելափակման (բացառությամբ՝ ծովահենության) և դրանց հետևանքների կամ դրանց փորձի հետևանքով.	5.3.2 capture, seizure, arrest, restraint, or detainment (excluding piracy), and the consequences thereof or any attempt thereat
5.3.3 լքված ականների, ստորջրյա ինքնաշարժ ականների /տորպեդների/, ռումբերի կամ լքված այլ պատերազմական զենքերի հետևանքով.	5.3.3 derelict mines, torpedo bombs or other derelict weapons of war.
5.4 Սույն ապահովագրությունը ոչ մի դեպքում չի հատուցում այն վնասը, կորուստը կամ ծախսը, որն առաջացել է՝	5.4 In no case shall this Insurance cover damage, loss or expense that was caused by
5.4.1 ցույցերի, աշխատավորների լոկաուտների կամ որևէ տեսակի խռովությունների կամ հուզումների, հասարակական կարգի խախտումների պատճառով և/կամ հետևանքով.	5.4.1 strikes, locked-out workmen, or any labor disturbances, riots or civil commotions
5.4.3 ահաբեկչի կամ քաղաքական դրդապատճառից ելնելով գործող ցանկացած անձի գործողության հետևանքով.	5.4.3 any terrorist or any person acting from a political motive.
5.4.4 պայմանագրում ցույց տրված չհատուցվող գումարը, որի չափով ապահովադիրը վնաս է կրում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում.	5.4.4 the deductible stated in the policy to be borne by the Insured in any one occurrence;
<b>6. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ</b>	<b>6.DURATION/PERIOD OF COVER</b>
6.1. Սույն ապահովագրությունն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ բեռը դուրս է հանվում պայմանագրում նշված պահեստից/տարածքից կամ պահեստավորման վայրից՝ տարանցիկ բեռնափոխադրման սկսման նպատակով, շարունակվում է տարանցիկ ուղու բնականոն ընթացքի տևողության ժամանակ և ընդհատվում է /ավարտվում է/ ստորև սահմանված դեպքերից որևէ մեկի տեղի ունենալու դեպքում՝	6.1 This Insurance starts to be in force from the time the cargo leaves the warehouse or place of storage mentioned in this policy for the commencement of the transit, continues during the ordinary course of transit and terminates when either of the following cases is present
6.1.1. երբ ապահովագրության օբյեկտը (ապահովագրված բեռը) հասցվում է բեռնատիրոջ պահեստ կամ ապահովագրության պայմանագրում որպես վերջնակետ սահմանված որևէ այլ վայր/տարածք	6.1.1 the interest (insurance object) is delivered to the warehouse of the Consignee or to other final warehouse or place of storage named in the policy
6.1.2. երբ ապահովագրված բեռը առաքվում է մեկ այլ պահեստ կամ պահեստավորման վայր՝ Ապահովադրի ընտրությամբ, անկախ այն բանից, թե սույն ապահովագրության պայմանագրում այդ վայրը սահմանված է որպես վերջին թե ոչ.	6.1.2 the interest (insurance object) is delivered to any other warehouse or place of storage, chosen by the Insured, even if the mentioned place is not provided as final in the insurance policy
6.1.2.1. բեռի՝ ոչ տարանցիկ ուղղում սահմանված վայրում պահեստավորելու համար,	6.1.2.1. for storage of the cargo in the place other than the ordinary course of transit or
6.1.2.2. տեղաբաշխման կամ բաշխման համար,	6.1.2.2. for allocation or distribution, or
6.2. Եթե մինչև սույն ապահովագրության ավարտը վերջնակետային վայրում/պահեստում տրանսպորտային միջոցից բեռը բեռնաբափելուց հետո այն նախատեսվում է առաքել ոչ այն վայրը/պահեստը, որը սույն ապահովագրության մեջ սահմանված է որպես վերջնակետ, ապա համաձայն 6.1. կետի սույն ապահովագրությունը չի	6.2. If, after discharge of cargo at final destination/warehouse and prior to termination of this insurance, it is intended to deliver the cargo to a warehouse/place initially not mentioned in the insurance policy, then as perpoint 8.1 this insurance does not cover the transportation of the cargo to the

<p>տարածվում մինչ այդ նոր վերջնակետ բեռի փոխադրման ժամանակ:</p>	<p>new final destination.</p>
<p>6.3. Սույն ապահովագրության գործողության ժամկետը (ենթակա լինելով 6.1., 6.2., ինչպես նաև Հոդված 6.4-ով սահմանված հիմքերով լուծարման դեպքերին) մնում է ուժի մեջ ոչ Ապահովագրի մեղքով տեղի ունեցած ուշացման, երթուղու շեղման, բռնի բեռնաթափման, վերաառաքման կամ վերաբեռնման, ինչպես նաև բեռնափոխադրման պայմանագրով տրանսպորտային միջոցների վարձակալներին տրված արտոնությունների իրականացման արդյունքում երթուղու ցանկացած շեղման ընթացքում:</p>	<p>6.3. This Insurance shall remain in force (subject to termination as provided for points 6.1 and 6.2 above and to the provisions of Clause 6.4) during delay beyond the control of the Insured, any route deviation, forced discharge, reshipment or transshipment and during any variation of the route arising from the liberty granted to shipowners or charterers under cargo insurance policy.</p>
<p>6.4 Եթե Ապահովագրի վերահսկումից դուրս գտնվող հանգամանքների պատճառով բեռնափոխադրման պայմանագիրն ավարտվում է ոչ այն նավահանգստում կամ վայրում, որը ապահովագրության պայմանագրով սահմանված է որպես վերջնակետ կամ, եթե տարանցիկ ուղին այլ կերպ ավարտվում է հոդված 6-ում սահմանված կարգով բեռն առաքելուց առաջ, ապա սույն ապահովագրության գործողությունը նույնպես դադարում է՝ բացառությամբ, երբ այդպիսի հանգամանքների մասին անհապաղ ծանուցում է տրվում Ապահովագրողին և հայցվում է ապահովագրության ծածկույթի շարունակումը: Այս դեպքում ենթակա լինելով լրացուցիչ ապահովագրավճարների վճարմանը (Ապահովագրողի պահանջի դեպքում), սույն ապահովագրությունը կպահպանի իր ուժը՝</p>	<p>6.4 If due to circumstances beyond the control of the Insured the cargo insurance is terminated at a port or place other than the destination named in the insurance policy or the transit is otherwise terminated before the delivery of the cargo as provided in Clause 6, then this Insurance shall also terminate unless prompt notice is given to the Insurer and continuation of cover is requested when the Insurance shall remain in force, subject to an additional premium if required by the Insurer</p>
<p>6.4.1 մինչ բեռի վաճառքը և դրա առաքումը նախատեսված նավահանգիստ կամ վայր, կամ այլ կերպ պայմանավորվածության համաձայն, կամ նախատեսված նավահանգիստ կամ վայր սույնով ապահովագրված բեռի ժամանումից 60 օր հետո (կախված դեպքերից որևէ մեկի առաջինը տեղի ունենալուց), կամ</p>	<p>6.4.1 until the cargo is sold and delivered to mentioned port or place, or, unless otherwise agreed, 60 days after the arrival of the insurance object - cargo to such port or place, whichever shall first occur, or</p>
<p>6.4.2 եթե բեռը՝ սահմանված 60 օրվա ընթացքում (կամ սույն ապահովագրությամբ նախատեսված երկարաձգված ժամկետում) առաքվում է ապահովագրությամբ սահմանված կամ այլ վերջնակետ՝ մինչ հոդված 6-ի համաձայն գործողության ժամկետի դադարեցումը:</p>	<p>6.4.2 if the cargo is forwarded within the said period of 60 days (or any agreed extension thereof) to the destination named herein or to any other destination, until terminated in accordance with the provisions of Clause 6.</p>
<p>6.5 Եթե սույն ապահովագրության ուժի մեջ մտնելուց հետո Ապահովագրի փոխում է վերջնակետը, ապա ապահովագրության ծածկույթը մնում է գործողության մեջ այդ մասին Ապահովագրողին անհապաղ ծանուցելու պայմանով, որի դեպքում ապահովագրավճարը և ապահովագրության պայմանները ենթակա են վերանայման:</p>	<p>6.5 If, after the enforcement of this Insurance, the Insured changes the final destination of the cargo, then the insurance cover stays in force in case the Insured provides an Insurer with a written notice; the insurance premium and terms and conditions are subject to reconsideration..</p>
<p><b>7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՍԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ</b></p>	<p><b>7. THE PROCEDURE OF A CLAIM PAYMENT</b></p>
<p>7.1. Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է Ապահովագրի կամ Շահառուին:</p>	<p>7.1. The Claim payment is made to the Insured or the Beneficiary.</p>
<p>7.2. Ապահովագրի դեպքում ապահովագրական պատահարի առաջանալու դեպքում պարտավոր է.</p>	<p>7.2. After becoming aware of an insurance accident, the Insured is obliged:</p>
<p>7.2.1. հայտնել պատահարի մասին այն համապատասխան իրավասու մարմիններին, որոնք լիազորված են կատարել ապահովագրական պատահարի հանգամանքների հետաքննություն կամ ունակ են նվազեցնել պատճառված վնասի հետևանքները:</p>	<p>7.2.1 to declare about an occurring event to the corresponding competent bodies, authorized to carry out an investigation of circumstances of an insurance accident, or capable to reduce the consequences of the damage caused;</p>
<p>7.2.2. 72 ժամվա ընթացքում զանգահարել ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարով և հայտնել “ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ” ԱՓԲԸ հավանական ապահովագրական պատահարի մասին:</p>	<p>7.2.2 to call, within 72 hours, the number which is specified in the Insurance Policy and inform INGO ARMENIA ICJSC about the possible insurance event;</p>

<p>7.2.3 «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ փորձագետին ապահովել վնասված բեռի զննման և պատճառված վնասի գնահատման հնարավորությամբ: Անհապաղ տեղեկացնել բոլոր այն ունեցվածքային բնույթի պահանջների ու բողոքների մասին, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով:</p>	<p>7.2.3 to provide the expert of INGO ARMENIA ICJSC with an opportunity of an examination of the damaged cargo and an estimation of the damage caused; to immediately inform INGO ARMENIA ICJSC about all the requirements and complaints of property nature presented along with an insurance event.</p>
<p>7.2.4 Իրազեկել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ պատահարի հետաքննության ընթացքի, դրա պատճառների ու հետևանքների մասին և մասնակցել այդպիսի հետաքննությանը:</p>	<p>7.2.4 to inform INGO ARMENIA ICJSC about the course of an incident investigation, its causes and consequences, and to take part in such investigation;</p>
<p>7.3 Ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձը կամ Ապահովադիրը ապահովագրական պատահարի տեղի ունենալուց 7 օրվա ընթացքում պարտավոր է հայցային դիմում ներկայացնել Ապահովագրողին՝ ըստ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ կողմից տրամադրված ձևի:</p>	<p>7.3 The person, who has the right to receive the claim payment, or the Insured, is obliged to submit a claim form provided by INGO ARMENIA ICJSC 7 within 7 days after the approach of an insurance accident.</p>
<p>7.4 Ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձը պարտավոր է ներկայացնել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ին ապահովագրական պատահարի հանգամանքներին, դրա պատճառներին ու պատճառված վնասի չափին վերաբերող փաստաթղթեր: Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներկայացված է ստորև:</p>	<p>7.4 The person, who has the right to receive the claim payment, must provide INGO ARMENIA ICJSC with documents concerning circumstances of the insurance accident, its causes and the size of the damage caused. The list of necessary documents is presented below.</p>
<p>7.5 Ապահովադիրը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝ կապված հայցի հետ.</p>	<p>7.5 The Insured must submit the following documents concerning the claim:</p>
<p>7.5.1 Հայցային դիմում</p>	<p>7.5.1. Claim form</p>
<p>7.5.2 Մաքսային մարմնի կողմից տրված փաստաթղթեր</p>	<p>7.5.2. Documents issued by the Customs Service</p>
<p>7.5.3 Բեռի կորստի դեպքում՝ ՀՀ Տրանսպորտային Ոստիկանության տեղեկանք կամ բեռնափոխադրողի կողմից տրված ակտ կամ փորձագետի եզրակացություն կորստի վերաբերյալ</p>	<p>7.5.3. In case of cargo loss, RA Transport Police notice or act given by the transporter or expert’s statement or notice about the loss</p>
<p>7.5.4 Բեռի վնասի դեպքում՝ բեռնափոխադրողի կողմից տրված ակտ կորստի վերաբերյալ կամ փորձագետի եզրակացություն կամ տեղեկանք դեպքի վերաբերյալ:</p>	<p>7.5.4. In case of cargo damage, report issued by the transporter or expert’s statement or notice regarding the accident.</p>
<p>7.5.5 Անկախ փորձագետի եզրակացություն վնասի չափի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում)</p>	<p>7.5.5. Report regarding the size of the damage, issued by an independent expert (if required)</p>
<p>7.5.6. Եթե ծախսը իրականացվել է Ապահովադիր/Շահառուի կողմից ինքնուրույն, ապա անհրաժեշտ է լրացուցիչ ներկայացնել հետևյալ ֆինանսական փաստաթղթերը՝ հաշիվ-պահանջագիր, դրամարկղային ֆիսկալային կտրոն (կանխիկ վճարման դեպքում) կամ դրամարկղի մուտքի օրդեր:</p>	<p>7.5.6 If the expenses were done by the Insured/Beneficiary, the following additional financial documents are required: Invoice Fiscal cheque (in case of cash payment) or Cash receipt</p>
<p>7.5.7 Ապահովադիր կամ Շահառուի բանկային տվյալները հատուցումը փոխանցումով ստանալու դեպքում:</p>	<p>7.5.7 Banking account details of the Insured or the Beneficiary in case of receiving the claim payment by transfer.</p>
<p><b>8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՍՏԱՐ ԱՆՀՐԱԺԵՇ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b></p>	<p><b>8. ADDITIONAL DOCUMENTS AND INFORMATION REQUIRED FOR CLAIM PAYMENT</b></p>
<p>8.1 Ապահովագրողը իրավունք է վերապահում որոշ դեպքերում դիմողից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն, որը ընկերության կարծիքով կարող է հստակեցնել տեղի ունեցած պատահարի էությունը և վնասի չափը:</p>	<p>8.1 In some cases the Insurer reserves the right to acquire additional documents and information from the Insured, regarding a claim payment, that might help define the nature and the size of the damage caused</p>
<p><b>9. ՎՆԱՍԻ ՉՈՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ</b></p>	<p><b>9. THE PROCEDURE OF LOSS ASSESSMENT AND CLAIMS PAYMENT</b></p>
<p>9.1 Սույն ապահովագրության ներքո հատուցում ստանալու համար, ապահովագրության առարկայի կորստի պահին Ապահովադիրը դրա նկատմամբ պետք է ունենա ապահովագրված շահ:</p>	<p>9.1 In order to receive a claim payment, the Insured must have an insurable interest in the insurance object at the time of the loss.</p>
<p>9.2 Ապահովվելով համապատասխանությունը հոդված 9.1-ով սահմանված պահանջին, Ապահովադիրն իրավունք ունի ստանալ սույն ապահովագրության գործողության</p>	<p>9.2 Subject to 9.1. above, the Insured has the right to receive a claim payment during the period covered by this Insurance, excluding the cases when the damage</p>

<p>ընթացքում տեղի ունեցած կորստի հատուցումը բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի վնասը տեղի է ունեցել ապահովագրության պայմանագիրը կնքելուց առաջ, երբ Ապահովադիրը տեղյակ էր նման կորստի մասին, իսկ Ապահովագրողը ոչ:</p>	<p>was done before the signing of the insurance policy and the Insured was aware of the loss, whereas the Insurer was not.</p>
<p>9.3 Ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրական գումարի սահմաններում: Վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ Ապահովադրի (Շահառուի) մասնակցությամբ՝ պայմանագրում նշված փաստաթղթերի հիման վրա: Տարածայնությունների դեպքում յուրաքանչյուր կողմը իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետի կողմից:</p>	<p>9.3 The claim payment is made within the limits of the Sum Insured. The size of the damage is determined by the Insurer with the participation of the Insured (Beneficiary) on the basis of the documents specified in this policy. In case of non-reaching of mutually acceptable agreement each party has the right to demand for determination of the size of the damage by an independent expert.</p>
<p>9.4 Համաձայն բեռնափոխադրումների ապահովագրության պայմանագրի վնասի չափը և համապատասխանաբար վճարվող ապահովագրական հատուցման չափը որոշվում է հետևյալ կերպ.</p>	<p>9.4 The damage as per cargo insurance policy and accordingly the amount of claim payment is determined as follows:</p>
<p>9.5 Բեռի ամբողջական կորստի (կամ ամբողջական փչացման) դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ամբողջ ծավալով, տարբերությամբ փրկված բեռի արժեքի, եթե դրա հատուցումը նախատեսված չի եղել ապահովագրության պայմանագրով:</p>	<p>9.5 In case of whole cargo loss or full damage, the claim payment is made fully in the range of the Sum Insured set by the Insurance Policy minus Salvage charges if that payment was not mentioned in the insurance policy;</p>
<p>9.6 Բեռը տեղափոխման միջոցների հետ համատեղ անհետ կորելու դեպքում ապահովագրական հատուցումը կատարվում է միևնույն եղանակով ինչպես և բեռի ամբողջական կորստի դեպքում, եթե միևնույն ժամանակ կորուստն, ըստ Ապահովագրողի եզրակացության, նշված իրադարձությունը ըստ ապահովագրության պայմանագրի համարվում է ապահովագրական պատահար:</p>	<p>9.6 in those cases, when the cargo is lost along with the means of transportation, the claim payment is calculated analogous to the case of the whole cargo loss if at the same time loss by an estimation of the Insurer has taken place as a result of the insurance event included in this insurance;</p>
<p>9.7 Բեռի մի մասի վնասման կամ կորստի դեպքում Ապահովադիրը, ապահովագրական հատուցման մի մասը ստանալու փոխարեն կարող է պահանջել այն ծախսերի հատուցում, որոնք պահանջվում են վնասի չափը որոշելու պահին բեռի վնասված մասերի վերականգնման կամ կորած մասերի ձեռք բերման համար: Ինչ վերաբերում է մեքենաներին և սարքավորումներին, որոնց վերականգնումը կապված է գործարանային պայմաններում բարդ տեխնոլոգիական գործընթացների ու բազմատեսակ բաղկացուցիչ լրամասերի առկայության հետ, տվյալ հանգամանքներում կարող են կիրառվել հատուկ պայմանավորվածության պայմաններ, որոնք կկցվեն ապահովագրության պայմանագրին: Ամբողջ բեռի կամ դրա մի մասի վնասման դեպքում հաշվարկի հիմք է ծառայում բեռի նախնական արժեքը և արժեքը վնասված վիճակում, այսինքն՝ ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է որպես անվնաս և վնասված բեռի արժեքների միջև տարբերություն: Տվյալ դեպքում հատուցման ենթակա գումարը դուրս է բերվում հետևյալ կերպ. հաշվարկվում է բեռի արժեքի նման գործակիցը որպես վնասված վիճակում արժեքի հարաբերակցություն բեռի նախնական արժեքի նկատմամբ և բազմապատկվում է ապահովագրական գումարի բաժնեմասի վրա, որը վավեր է բեռի նախնական արժեքի համար (այսինքն, առանց բեռի փոխադրման ծախսերի՝ մինչ բեռի ստացումը և վերջնական բեռնափոխադրման գումարների վճարումը):</p>	<p>9.7 In case of damage or loss of a part of the cargo the Insured instead of receiving a part of the claim payment can demand compensation for those expenses, which at the moment of establishment of extent of damage are required for restoration of damaged or purchase of the lost parts of the cargo. Concerning machines and equipment, the restoration of which is connected to complex technological processes in the plant conditions and presence of polytypic accessories, the especially stipulated conditions applied to an insurance policy under these circumstances can be applied. In case of whole or partial cargo damage, the value of the damaged cargo is estimated on the basis of the prices in effect at the moment of making the insurance policy. The claim amount is estimated as the difference between the value of the nondamaged and damaged cargo. The loss compensated in this case is estimated as follows: it is deducing the depreciation factor of cargo as the cost's relation in the damaged condition to initial cost of cargo and multiplied on the share of the Sum Insured, the falling on initial cost of the cargo (i.e. without charges on delivery of the cargo before its acceptance by consignee and finally paid freight).</p>
<p>9.8 Բեռնափոխադրման միջոցները համարվում են անհետ կորած, եթե դրանց պլանավորված ժամանումից անցել է 60 օր և վնասների հատուցման վերաբերյալ հայցային դիմում լրացնելու պահին դրանց մասին որևէ տեղեկատվություն չի</p>	<p>9.8 The means of transportation are considered lost, if the period of 60 days has passed since their planned arrival and there was no information about them at the moment of submitting the claim form. In those cases,</p>

<p>ստացվել: Այն դեպքերում, երբ տեղեկատվության ստացումը կարող է հսկայապես պատերազմի, ռազմական գործողությունների բնույթ կրող իրադարձությունների, քաղաքացիական պատերազմի կամ հասարակական խռովությունների պատճառով, ապա այն ժամանակը, որից սկսած ենթադրվում է, որ բեռը կորել է, երկարաձգվում է հանգամանքներին համապատասխան՝ ընդ որում չգերազանցելով 6 ամիսը:</p>	<p>when delivery of the information can be detained owing to war, military activities, civil war or public disorders, the time since which it is supposed that the cargo is lost, extends according to circumstances, not exceeding thus of 6 months;</p>
<p>9.9 Ավիատեղափոխումների դեպքում բեռը կորած է համարվում տեղափոխման ժամանակ, եթե այն չի հայտնաբերվել հետախուզմամբ 90 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, որը հաջորդում է օրվան, երբ բեռը պետք է մատակարարված լիներ նշանակման կետ օդանավակայանում:</p>	<p>9.9 in case of air transportations the cargo is considered lost during the transportation if it has not been found within 90 days since the day following the one when the cargo should have been delivered to the airport of destination.</p>
<p>9.10 Եթե բեռների ապահովագրության պայմանագիրը նախատեսում է բեռի տեղափոխումը (պահպանումը) խմբաքանակներով (մաս-մաս), ընդ որում ապահովագրական պայմանագրում ապահովագրական գումարը սահմանված է ամբողջ բեռի հաշվարկով, ապա Ապահովագրողի պատասխանատվության չափը բեռի յուրաքանչյուր խմբաքանակի (մասի) համար հավասար է այն ապահովագրական գումարի մասին, որը համարժեք է բեռի տվյալ խմբաքանակին (մասին)՝ ելնելով դրա արժեքի մեծությունից բեռի ընդհանուր իրական արժեքի նկատմամբ: Այն դեպքում, երբ փոխադրվող (պահպանվող) բեռի իրական արժեքը գերազանցում է ապահովագրական գումարը, ապա Ապահովագրողի պատասխանատվության չափը որոշվում է փոխադրվող (պահպանվող) բեռի իրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի հարաբերակցությանը համամասնորեն: Ընդ որում, վնասների հատուցումը կատարվում է վնասի լրիվ չափի համապատասխան մասով:</p>	<p>9.10 If the Cargo Insurance Policy provides transportation (storage) of a cargo in lots (in parts), but the Sum Insured mentioned in the policy is determined by the whole cargo in aggregate, the size of the Insurer’s responsibility on each cargo lot (part) is equal to that part of the Sum Insured which falls at the given cargo lot (part), proceeding from size of its cost in the general valid value of the cargo. In case, when the value of the transported (stored) cargo exceeds the Sum Insured, the size of the Insurer’s responsibility is defined as a proportion of any loss or damage the Sum Insured bears to the total value of the insured transported (stored) cargo. At that the damage compensation is made in a corresponding part from the full amount of damage.</p>
<p>9.11 Եթե բեռը ստանալու ժամանակ ստացողը/Ապահովադիրը գրավոր չի հայտնել տեղափոխողին բեռի պակասորդի կամ վնասվածքի մասին, ապա համարվում է, որ նա պատշաճ ձևով ստացել է բեռը՝ բեռնափոխադրման պայմանագրի պայմաններին համապատասխան (կոնոսամենտ /տրանսպորտային բեռնագիր/, ապրանքա-տրանսպորտային կամ երկաթուղային բեռնագրեր և այլն): Եթե բեռի պակասորդը կամ վնասը չի կարող հայտնաբերվել բեռը սովորական եղանակով ստանալու ժամանակ, տեղափոխողին ուղղված դիմումը պետք է ներկայացվի համապատասխան տրանսպորտի տեսակով հաստատված տեղափոխման որոշակի կանոնների ժամանակահատվածում: Եթե բեռը ստացողը տեղափոխողին չներկայացնի այդպիսի դիմում սահմանված ժամկետում, ապա դա կարող է հիմք հանդիսանալ Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը վճարելուց հրաժարվելու համար:</p>	<p>9.11 If at the time of receiving the cargo the consignee/Insured did not declare to the transporter about a shortage or damage of the cargo, it is considered, that cargo has arrived in an appropriate form according to transportation policy provisions (bill of loading, invoice or the waybill, etc.). If shortage or damage of the cargo could not be found the usual way at the time of receiving the cargo, the application form should be submitted to the transporter during the term, determined by the rules of transportation established on the corresponding type of transport. If the consignee/Insured does not submit such application form to the transporter in the time set, it can form the basis for a refusal of the claim payment to the Insurer.</p>
<p>9.12 Եթե բեռն ապահովագրված է մի քանի Ապահովագրողների մոտ, որոնց ընդհանուր ապահովագրական գումարը գերազանցում է դրա արժեքը, ապա բոլոր Ապահովագրողները պատասխանատվություն են կրում միայն տվյալ բեռի իրական արժեքի սահմաններում, ընդ որում, նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է այն ապահովագրական գումարին համամասնորեն, ըստ որի նա կնքել է ապահովագրության պայմանագիրը:</p>	<p>9.12 If the cargo is insured by several Insurers the aggregate Sum Insured of which exceeds its value, then all the Insurers are responsible only within the limits of the value of the given cargo, and at that each of them is responsible proportionally to Sum Insured mentioned in the signed Insurance Policy.</p>
<p>9.13. Այն դեպքում, երբ սույն ապահովագրությամբ ծածկված ռիսկի տեղի ունենալու հետևանքով</p>	<p>9.13 In those cases when as a result of the a risk covered by this Insurance, the insured transit is terminated at a port or place other than what is</p>

<p>ապահովագրված տարանցիկ բեռնափոխադրումն ավարտվում է ապահովագրությամբ չնախատեսված նավահանգստում կամ վայրում, Ապահովագրողը պետք է Ապահովադիրին հատուցի բոլոր այն ողջամիտ և պատշաճ կարգով կատարվա լրացուցիչ ծախսերը, որոնք կապված են ապահովագրության առարկայի բեռնաթափման, պահեստավորման և սույն ապահովագրությամբ նախատեսված վերջնակետ առաքելու հետ:</p>	<p>mentioned in this Insurance policy, the Insurer must reimburse the Insured for any extra charges properly and reasonably incurred in unloading, storing and forwarding the interest (insurance object) to the destination to which it is insured hereunder.</p>
<p>9.14 9.1-9.12 կետերը, որոնք չեն կիրառվում ընդհանուր վթարային և գույքի փրկման հետ կապված ծախսերի նկատմամբ, ենթակա է վերն ամրագրված Բացառությունների 5.1; 5.2; 5.3 և 5.4 հոդվածներով սահմանված բացառություններին և չի ներառում Ապահովադիրի կամ նրա աշխատակիցների մեղքով, անփութության, անվճարունակության կամ ֆինանսական խախտման հետևանքով առաջացած ծախսերը:</p>	<p>9.14 Points 9.1-9.12, which do not apply to general average or salvage charges, is subject to the exclusions contained in the Clauses 5.1; 5.2; 5.3 and 5.4 above, and does not include charges arising from the fault negligence insolvency or financial default of the Insured or his/her workers.</p>
<p>9.15 Սույն ապահովագրությունը չի հատուցում ապահովագրության օբյեկտի «Կոնստրուկտիվ Լրիվ Կորստի» առնչությամբ ներկայացված որևէ պահանջ/հայտ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրության օբյեկտը լքվել է դրա փաստացի, լրիվ և անխուսափելի կորստի պատճառով կամ, երբ ապահովագրության օբյեկտի վերականգնման, վերանորոգման և ապահովագրությամբ նախատեսված վերջնակետ առաքելու ծախսերը գերազանցում են բեռի արժեքը՝ դրա տեղ հասնելու պահին:</p>	<p>9.15 This insurance does not provide claim payment for Constructive Total Loss of the interest (insured object) unless the interest (insured object) is reasonably abandoned either on account of its actual total loss appearing to be unavoidable or when the cost of restoration, renovation and transferring the interest (insured object) to the destination mentioned in the insurance policy exceeds its value on arrival.</p>
<p>9.16 Ապահովադիրի կողմից սույնով ապահովագրված բեռի ավելացած (լրացուցիչ) արժեքի Ապահովագրության դեպքում, փոխադրվող բեռի համաձայնեցված արժեքը համարվում է ավելացած՝ սույն ապահովագրությամբ ապահովագրված ամբողջ գումարի չափով, իսկ ավելացած արժեքի բոլոր ապահովագրությունները բաշխվում են սույնով ապահովագրված կորստի և պարտավորության միջև նույն համամասնությամբ, ինչ որ սույնով ապահովագրված գումարն է այդ ընդհանուր գումարի նկատմամբ: Պահանջի/հայտի ներկայացման դեպքում, Ապահովադիրը պետք է Ապահովագրողին տրամադրի բոլոր այլ ապահովագրություններով ապահովագրված գումարների վերաբերյալ ապացույցներ:</p>	<p>9.16 In case, when any Increased Value Insurance is effected by the Insured on the insured cargo herein, the agreed value of the cargo shall be deemed to be increased by the amount of total sum insured under this Insurance, and all Increased Value insurances covering the loss and liability under this Insurance shall be in such proportion as the sum insured herein bears to such total amount of sum insured. In case of a claim/demand the Insured shall provide the Insurer with an evidence of the amounts insured by other insurances.</p>
<p>9.17 Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ հայտի կարգավորման մասին որոշում է ընդունում, կազմելով այդ մասին համապատասխան եզրակացություն: Հատուցման վճարումը կատարվում է հայտի կարգավորման վերաբերյալ որոշման/եզրակացության ընդունման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:</p>	<p>9.17 Within 15 days after obtaining of all the necessary documents INGO ARMENIA ICJSC makes a decision regarding the settlement of the claim and draws up an insurance statement (act). The claim payment is made within 15 days from the date of drawing up of the insurance statement (act).</p>
<p>9.17.1 Հատուցման վճարումը կարող է կատարվել միանվագ կամ մաս-մաս:</p>	<p>9.17.1 The claim payment can be made as a lump-sum or in some installments.</p>
<p>9.17.2 Մինչ բոլոր փաստաթղթերի ստանալը, ըստ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ որոշման և Ապահովադիրի խնդրանքով, կարող է իրականացվել ապահովագրական հատուցման մասնակի վճարում՝ կանխավճարի տեսքով: Տվյալ դեպքում կազմվում է միջանկյալ ապահովագրական հավաստագիր: Միջանկյալ հավաստագիրը կազմվում է հայտի վերաբերյալ տվյալ պահին հայտնի տեղեկությունների և առկա փաստաթղթերի հիման վրա: Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո, ապահովագրական հատուցումը կվճարվի ամբողջությամբ՝ վերջնական ապահովագրական հավաստագիր կազմելու եղանակով:</p>	<p>9.17.2 Before obtaining of all the documents, by INGO ARMENIA ICJSC’s decision and by the Insured’s request, the claim payment can be made partially as an advanced payment. In this case an intermediate insurance statement is made. The intermediate statement is drawn up on the basis of information and documents available at that time. After obtaining of all the necessary documents, the full claim payment will be made by drawing up final insurance statement.</p>
<p><b>10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՍՔԵՐԸ</b></p>	<p><b>10. BASES FOR A CLAIM PAYMENT REFUSAL</b></p>

<p>10.1 Ապահովագրողն իրավունք ունի լրիվ կամ մասնակի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե.</p>	<p>10.1 The Insurer has the right to refuse the claim payment in full or in part, if:</p>
<p>10.1.1 Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը ապահովագրական պայմանագրով սահմանված ժամկետներում;</p>	<p>10.1.1 The Insured has not paid the insurance premium within the terms provided in the insurance policy;</p>
<p>10.1.2 ապահովագրական պատահարը դարձել է Ապահովադրի (Շահառուի) կանխատեսված գործողությունների հետևանք, կամ այն գործողությունների հետևանք, որոնցում նախաքննական մարմինների կամ դատարանի կողմից հաստատվել են կանխատեսված հանցագործության հատկանիշներ;</p>	<p>10.1.2 The insurance event was a consequence of deliberate actions of the Insured or the Beneficiary, or actions in which investigatory bodies or court establish evidences of a deliberate crime;</p>
<p>10.1.3 երրորդ անձանց կողմից բեռի հափշտակման, ինչպես նաև հակահրավակական ոչնչացման կամ վնասման փաստի մասին Ապահովադիրը կամ Շահառուն կամ Բեռնափոխադրողը չի հաղորդել համապատասխան իրավապահ մարմիններին և եթե այդ փաստը վերոնշյալ մարմինների կողմից չի հաստատվել;</p>	<p>10.1.3 The Insured, or the Beneficiary, or the Transporter did not inform corresponding law enforcement bodies about the fact of hijacking, illegal destruction or damage of the cargo by third parties, also if this fact by specified bodies does not prove to be true;</p>
<p>10.1.4 Ապահովադիրը, համաձայն ապահովագրության վերաբերյալ դիմումի, հաղորդել է սխալ տեղեկություններ այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական ռիսկի մեկնաբանության համար կամ չի տրամադրել ամբողջական տեղեկություն;</p>	<p>10.1.4 The Insured, according to the insurance application form provided false information about the circumstances that have significance for insurance risk justification or did not provide complete data;</p>
<p>10.1.5 Ապահովադիրը չի իրազեկել Ապահովագրողին ռիսկում էական փոփոխությունների մասին 48 ժամվա ընթացքում՝ սկսած դրանց մասին հայտնի դառնալու պահից, այն է՝ երթուղու, բեռնափոխադրողի, ապահովագրված բեռի փաթեթավորման փոփոխությունը; բեռի արժեքի բարձրացումը, բեռի բնույթի մասնակի փոփոխությունը;</p>	<p>10.1.5 The Insured did not inform the Insurer about significant changes in risk within 24 hours from the moment of becoming aware about them; changes regarding the route, transporter, packing of the insured cargo; increase in cost of the cargo, partial change in the nature of the cargo;</p>
<p>10.1.6 հնարավորության դեպքում Ապահովադիրը կամ Շահառուն չի ձեռնարկել բեռը փրկելու և պահպանելու միջոցառումներ և չի տեղեկացրել ապահովագրական պատահարի մասին «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ին կամ նրա ներկայացուցչին:</p>	<p>10.1.6 The Insured or the Beneficiary did not take any action towards rescue or preservation of the cargo and did not inform “INGO ARMENIA” ICJSC or his representative about an insurance event.</p>
<p>10.2 Պայմանագիրը, ըստ որի վճարվել է ապահովագրական հատուցումը, ուժի մեջ է մինչ պայմանագրում ներկայացված ժամկետի ավարտը՝ նշված ապահովագրական գումարի և կատարված ապահովագրական հատուցման տարբերության չափով: Ապահովագրական գումարի փոքրացումը կատարվում է ապահովագրական պատահարի ամսաթվից:</p>	<p>10.2 The Policy, according to which the claim payment was made, is valid until the expiration of the term set in the Schedule of the policy at a range of a difference between the Sum Insured specified in the Policy, and the amount of claim payment. Reduction of Sum Insured is done starting from the date of an insurance event.</p>
<p>10.3 Եթե վնասը մասնակի հատուցվում է այն առաջացնելու մեջ մեղավոր անձանց կողմից, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է այն գումարի տարբերությամբ, որը ստացել է Ապահովադիրը մեղավոր անձից: Ապահովագրողն իրավունք ունի տարժամկետել ապահովագրական հատուցման վճարումը, եթե համապատասխան իրավասու մարմինների կողմից հարուցվել է քրեական գործ Ապահովադրի, Շահառուի կամ նրանց ներկայացուցիչների դեմ՝ տվյալ ապահովագրական պատահարի կապակցությամբ կամ կատարվում է վնասների առաջացմանը հանգեցնող հանգամանքների հետաքննություն՝ մինչև քննության ավարտը:</p>	<p>10.3 If the damage is partially compensated by the guilty Third Party, then the Insurer receives the claim payment with the difference of the amount that was paid by the guilty Third Party. The Insurer has the right to postpone the claim payment if corresponding competent law enforcement bodies bring criminal case against the Insured, Beneficiary or their representatives concerning the given insurance event or carry out an investigation of the circumstances resulted in occurrence of losses – until the termination of investigation.</p>
<p><b>11. ԱՐԱՆՈՆ (ԱՊԱՀՈՎԱԳՐԻ ԿԱՍ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԲԵՌԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ)</b></p>	<p><b>11. ABANDON (REFUSAL OF THE RIGHTS UPON THE INSURED CARGO BY INSURED OR BENEFICIARY)</b></p>
<p>11.1 Ապահովագրողն իրավունք ունի, բայց պարտավոր չէ վճարել ամբողջ ապահովագրական գումարը Ապահովադրի կողմից ապահովագրված բեռի իր իրավունքներից հրաժարվելու (աբանդոն) պայմաններում՝ հետևյալ դեպքերում. բեռի՝ բեռնափոխադրման միջոցների հետ մեկտեղ կորուստ; բեռի լրիվ փչացում; վնասների շտկման</p>	<p>11.1 The Insurer has the right, but is not obliged to pay the whole Sum Insured under condition of refusal by the Insured of his/her rights upon the insured cargo (abandon) in the following cases: loss of the cargo along with the means of transportation; full constructive loss of cargo, economic insufficiency of damages' elimination or</p>

<p>տնտեսական աննպատակահարմարության կամ ապահովագրված բեռը նշանակման կետ հասցնելու դեպքում, եթե դրանց արժեքի վերականգնումը գերազանցում է ապահովագրական գումարի 75%-ը; ազգային հուզումների կամ ահաբեկչական ակտերի հետևանքով բեռի հափշտակման դեպքում, եթե բեռն ապահովագրված է այդպիսի ռիսկերից և հափշտակումը տևում է 60 օրից ավելի: Աբանդոնի վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվի Ապահովագրողին 6 ամսվա ընթացքում՝ սկսած նշված հանգամանքների մեկնարկման պահից: Աբանդոնի վերաբերյալ դիմումը չի կարող ետ վերադարձվել: Եթե ապահովագրական հատուցումը ստանալուց հետո պարզվի, որ բեռը վնասված չէ, ապա Ապահովագրողը կարող է պահանջել, որպեսզի Ապահովադիրը (Շահառուն), իրեն բողոքելով բեռը, վերադարձնի ապահովագրական հատուցումը՝ մասնակի վնասի հատուցման տարբերությամբ, եթե այդպիսին եղել է: Ապահովագրված բեռի նկատմամբ իրավունքների անցումը Ապահովագրողին չի ազատում Ապահովադիրին (Շահառուին) կամ Բեռնափոխադրողին իր պարտավորություններից՝ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցառումները՝ վնասները և կորուստները նվազագույնի հասցնելու ուղղությամբ:</p>	<p>delivery of the insured cargo to destination if restoration of their value exceeds 75% of the Sum Insured; detainment of the cargo as a result of national unrests or acts of terrorism if the cargo is insured against those risks and capture lasts more than 60 days. The statement about abandon should be submitted to the Insurer within 6 months starting from the moment of the aforementioned circumstances. The statement about abandon cannot be taken back. If, after receiving the claim payment, the cargo happens to be non-damaged, then the Insurer can require from the Insured (the Beneficiary) to return the claim payment keeping the cargo and the compensation for partial damage, if there was any. Transfer of the Insured’s rights upon the insured cargo to the Insurer does not release the Insured (Beneficiary) or the transporter from his/her obligations to take all possible measures towards minimizing losses or damages.</p>
<p align="center"><b>12. ՀԵՏՊԱՀԱՆՁ</b></p>	<p align="center"><b>12. SUBROGATION</b></p>
<p>12.1 Ապահովագրական հատուցումը վճարելուց հետո, Ապահովագրողին վճարված գումարի սահմաններում անցնում են բոլոր այն պահանջների իրավունքները, որոնք ունի Ապահովադիրը կամ Շահառուն երրորդ անձանց նկատմամբ: Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր են ապահովագրական հատուցում ստանալիս Ապահովագրողին փոխանցել իրենց ունեցած բոլոր փաստաթղթերն ու ապացույցները և կատարել հետպահանջի իրավունքն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր ձևակերպումները:</p>	<p>12.1 After the claim payment, all the rights and demands that the Insured or the Beneficiary has to Third Parties go to the Insurer, in the range of the amount paid. When receiving the claim payment, the Insured or the Beneficiary must provide the Insurer with all the available documents and proves, also complete all the formalities necessary for realization of the subrogation.</p>
<p>12.2 Եթե Ապահովադիրը կամ Շահառուն հրաժարվեն այդպիսի իրավունքներից կամ պարզվի, որ հետպահանջի իրականացումը անհնարին է իրենց իսկ մեղքով (վնասի հարցում մեղավոր անձանց հայցային դիմում ներկայացնելու ժամկետների բացթողում և այլն), Ապահովագրողը համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ արդեն կատարված վճարի դեպքում Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր են վերադարձնել Ապահովագրողին ստացված ապահովագրական հատուցումն ու դրա տոկոսները, որոնք հաշվեգրվել են ապահովագրական հատուցումը ստանալու օրվանից՝ օրենսդրությամբ սահմանված դրույթաչափերի շրջանակներում:</p>	<p>12.2 If the Insured or the Beneficiary refuse to accept those rights, or the realization of the subrogation becomes impossible because of the Insured or the Beneficiary (omission of deadlines of submitting a claim to the guilty parties) Insurer will be released from his duty to make the claim payment in corresponding volumes; whereas, in case when the Insurer has already made the claim payment, the Insured or the Beneficiary must return to the Insurer the received claim payment plus the interest on it, starting from the day of receiving the claim payment in the range of rates set by-law Subrogation – the substitution of the Insurer for the Insured to pursue any rights the Insured has against a third party liable for a loss paid by the Insurer.</p>
<p align="center"><b>13. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՂԱԺԱՍԿԵՏ ԼՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ</b></p>	<p align="center"><b>13. AMENDMENT AND CANCELLATION OF INSURANCE POLICY</b></p>
<p>13.1 Ապահովադիրը կարող է չեղյալ համարել Ապահովագրության պայմանագիրը՝ ցանկացած ժամանակ, Ապահովագրողին 5 օր առաջ գրավոր ծանուցելով այդ մասին: Ապահովագրական պայմանագիրը կարող է դադարեցվել նաև Ապահովագրողի կողմից օրենքով սահմանված կարգով: Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:</p>	<p>13.1 The Insured may cancel this policy at any time by giving the Insurer 5-day written notice. Insurance policy may also be cancelled by Insurer in accordance with the legislation. The Policy shall be amended or restated solely by the consent of the Parties in written form.</p>
<p align="center"><b>14. ԳՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍՆԱՏԵԼԻՈՒԹՅՈՒՆ</b></p>	<p align="center"><b>14. PROVISION SEVERABILITY</b></p>
<p>14.1 Եթե Վկայագրի որևէ դրույթ ճանաչվում է անվավեր կամ դառնում է անգործադրելի, ապա այն պետք է վերանայվի համապատասխան օրենքների եւ նորմերի</p>	<p>14.1 If any provision of this Policy is held invalid or unenforceable, it shall be revised to achieve the intent of the Parties within the limits of applicable law and</p>

<p>սահմաններում: Կողմերի մտադրությունը վերականգնելու, և այդպիսի անվավերությունը կամ անգործադրելիությունը չի ազդում Պայմանագրի որևէ այլ դրույթի վավերականության կամ գործադրելիության վրա: Կողմերը չեն շահարկի Պայմանագրի որևէ դրույթի անգործադրելիությունը Պայմանագրով սահմանված իրենց պարտավորություններից խուսափելու համար:</p>	<p>the rest of the Agreement shall remain in force. Neither Party shall use the unenforceability of any provision as a defense to performance of any obligation.</p>
<p><b>15. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ</b></p>	<p><b>15. LANGUAGE OF THE POLICY</b></p>
<p>15.1 Պայմանագիրը կնքվում է հայերեն և անգլերեն լեզուներով՝ երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրը ստանում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի հայերեն և անգլերեն տեքստերի միջև անհամապատասխանությունների առկայության դեպքում, նախապատվությունը տրվում է հայերեն օրինակին:</p>	<p>15.1 The policy is made in Armenian and English in two copies. Each party receives one copy of the policy. In case of discrepancy between the Armenian and English texts of the policy, the Armenian version shall prevail.</p>
<p><b>16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ</b></p>	<p><b>16. RESOLUTION OF DISPUTES</b></p>
<p>16.1 Ապահովագրության պայմանագրից ծագող բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ փոխադարձ համաձայնության չգալու դեպքում՝ չչ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	<p>16.1 Disputes arising from the Policy shall be resolved through negotiations. If Parties fail to reach mutual agreement, such disputes shall be resolved in accordance with the legislation of the Republic of Armenia.</p>